


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
 Ե. ԲՈՐՈՍՅԱՆ
 Նամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղել առ
 Տնօրին. ԱՐՇԱԼՈՅՍ քաղաքի
 ԳԱՂԱՔԱՆ (Եգիպտոս)



ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՊԻՊՏՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դրոշմ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN
 Direc. propr. du journal arménien
 ARCHALOUICE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆՈՒԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
 Կանխիկ վճարելի են

ԻՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Պատ. բաժանորդներէն
 կը խնդրուի, իրենց ԵՐԿՐՈՐԴ տարւոյ բա-
 ժանորդագիւնը որկէջ Տնօրինութեան հաս-
 յեիմ :

ԱՐՏԱՍՏԱԿՄԱՆԻ Պատ. բաժա-
 նորդներէն ալ ջերմապէս կը խնդրուի,
 որ բարեհաւան լինալուով տարիէն մնաց-
 եայ պատրաստ կցեղով որկէջ նստել իրենց
 ԵՐԿՐՈՐԴ Ծարեքցանի բաժանորդագիւնը,
 եւ հարկ չը քողոյ մասնաւոր դիմումնե-
 րու, որով ընդ զայն արդէն բազմազարդ
 Տնօրինութեան :

ԴԵՌ ԻՆՁ ԿՐՆԱՆՔ ԸՆԵԼ

(Շարն. նախորդ թիւէն)

Այս վերնագրով երբ անցեալ անգամ
 Որբասիրական ձեռնարկներուն վրայ համա-
 ոտ ակնարկ մը կը նետելինք, կազմու-
 թեանց թուականին հետեւելով՝ առաջնու-
 թիւն տուած էինք Գահիրէի Հայոց Որբա-
 սիրաց Ընկերութեան, որուն Գործ. Ժու-
 ղովը ընդ Ատենապետութեամբ Մեծ. Տ.
 Ա. Մ. Պէրպէրեանի, հսկայ և յաջող
 քայլեր առած էր իւր ձեռնարկին մէջ :

Ճշգրիտ տեղեկութիւններ հաղորդել
 ուղղով (°) մէկը, « Նոր Օր » ի 41րդ. թու-
 ուով « Հայ Որբանոցներն ու Եգիպտոս »
 վերաբերութեամբ Խմբագրական յօդուածի
 մը մէջ, չ'գիտցուի ի՞նչ թագուն նպա-
 տակաւ, հետեւեալ յայտարարութիւնը կ'ը-
 նէր :

« Որբասիրաց Ընկերութիւն. — Վաս-
 պուրականի օրինակին հետեւելով անկէ ան-
 միջապէս վերջը կազմուեցաւ սոյն Ընկե-
 րութիւնը, նպատակ ունենալով որդեգրել
 որբեր միմիայն Արաբիկի մէջ ևն » :

Յօդուածագիրը իւր գրութեան սկզբ-
 նաւորութեանը մէջ, անդամակցութիւն տա-
 լով Վասպուրականին, 1899 Յունիս 1 կար-
 ձանագրէր անոր կազմութեան թուականը .
 լաւ յիշել չուզելով անշուշտ թէ՛ Գահիրէի
 Հայոց Որբասիրաց Ընկերութեան կազմու-
 թեան թուականն է 1899 Մայիս 1 :

Ընթերցողին կը մնայ դատել ու վճ-

ուել այժմ — եթէ տարակուսելու տեղի
 մնաց — թէ ո՞րն է անդամակցի և թէ՛ ո՞վ
 որու հետեւած կըլլայ. կամ « Նոր Օր » ի
 Խմբագրականին հեղինակը, հետեւած բառը
 գործածելով ի՞նչ հասկցնել կուզէ :

Եթէ յեղաշրջումիւ այս վերջնութիւնը դը-
 րութիւնը ընդունինք, կասկածելու իրա-
 ւունքը պիտի ունենանք թէ՛ այդ յօդուա-
 ծագիրը օր մը իր հօրը դառնալով հետե-
 ւալները պիտի ըսէ .

« Ես քու հայրդ եմ, որովհետեւ դու
 ինձ ՀԵՏԵԻՆՈՎ է որ աշխարհ եկած ես » .
 Մեր ծիծաղը այդ օրին վերապահելով՝
 մենք այժմ վերագառնանք հետեւիլ մեր
 շարունակելի յօդուածին ուղղութեան և
 հարցնել թէ՛ Դեմո ի՞նչ կ'ընենք Ընել :

Գահիրէի Հայոց Որբասիրացին դրամա.
 կան ուժին վրայ համառօտ ակնարկութիւն
 մը ըրինք անցեալ անգամ . և ինչպէս ը-
 սինք, կազմութեան թուականը նախագա-
 սելով առաջնութիւն տուինք անոր :

Առնենք ուրեմն երկրորդը :

Բ. Վասպուրականի Որբասիրամ Ընկե-
 րութիւն :
 1899 Յունիս 1 էն սկսեալ կազմուելով
 և գործի ձեռնարկելով՝ այս Ընկերութիւնը
 անդու ու անխոնջ ջանքերով, իր գծած
 ուղիին ու նպատակին հաւատարիմ, ան-
 սայլթաք կը յարատեւէ մինչև ց'այսօր և
 տարակուսելու պատճառ մը չունինք թէ՛
 նոյն թափով ալ պիտի յարատեւէ իրեն ժը-
 րալան Պատ. Գործ. Ժողովոյն իրական
 ջանքերով :

Վասպուրականի Որբասիրամը՝ աշխա-
 տութեան, ջանքի և արգիւնքի տեսակէ-
 տով իւր անդրանիկ եղբորմէն, Որբասի-
 րաց Ընկերութեան, վար չ'մնար :

17 անդամներով կազմուած Ընկերու-
 թիւն մ'էր որ քիչ ժամանակուան մէջ 200
 էն աւելի անդամներ ունեցաւ :

Վարագայ Վանուց մէջ 14 անպաշտպան
 որբերու հայրն եղած է և 13 ամսուան շը-
 ջանի մը մէջ 84 ոսկի ղրկած է Վարագայ
 Վանուց Հոգաբարձութեան, իրմէ պաշտ-
 պանեալ 14 որբերու տարեկան ծախուցն
 համար :

Կազմութեանն ի վեր իւր ընդհանուր
 հասոյթն եղած է 10,018 ղր. յորմէ զեղ-
 ջելով ղրկուած գումարներն, պատրաստ
 դրամ կունենայ այժմ իւր սնտուկին մէջ
 20 ի չափ ոսկիներ. և մինչև նոր գումար մը
 ղրկելու թուականը բնական է որ պատրաստ
 գումարը պիտի բարձրանայ քառասուն կամ
 յիսուն և աւելի ոսկիներու :

Վասպուրականի Որբասիրամին յաջո՞ճ

ղութիւններն ալ գոհացուցիչ վիճակի մը
 մէջ տեսնելով և արձանագրելով հանդերձ,
 մենք միշտ պէտքը կ'ունենանք հարցնելու
 թէ՛ Դեմո ի՞նչ կ'ընենք Ընել .
 (Շարունակելի)

Ե .

ՔՆՆԱԴՏԱԿԱՆ

ԲՈՒՐԻՒՄ 1876 ԵՆ Ի ՎԵՐ

ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌԹԻՒ

ՀԵՂԻՆԱԿ Ս. ՓԱՓԱՉԵԱՆ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ . 1. Երես . 4 .
 Հատ . 1 . Այս հաստուածին մէջ հեղինակը կը յի-
 շէ թէ Սուլթան Համիտի գահակալութեանն ի
 վեր ամբողջ ժամանակն երկրին մէջ 2500 վար-
 ժարան հաստատուած է, բացի գիտական ուրիշ
 հաստատութիւններէ ինչպէս չորս տիպար ազա-
 րակներ, կայսերական դիտարան եւ այլն . « Եւ
 այսպէս է » կ'ըսէ, « որ բովանդակ թուրքիան
 լցուած է կրթութեան բարեօք եւ ազատուած է
 սոցիալութեանն որ կը տիրէր ամեն ուրեք » :

Նախ. Այդ թուոյն մէջ եւ բոլոր քրիստոնեայ
 յարանուանութեանց կրթական հաստատութիւն-
 ներն՝ ազգային եւ անհատական, որոնք ազանց
 կտաւաբարական նպատի, ո՞ գիտէ ո՞րքայն զըժ-
 ուարութիւններով, եւ ի գին ամեն տեսակ գո-
 հողութեանց յաջողած են եւ կը յաջողին հաս-
 ատել այդ դպրոցները . շատ անգամ դեսպանա-
 կան միջամտութեամբ վերաբանալով զանոնք
 երբ տեղական իշխանութիւնները ինչ ինչ պա-
 տուակով կը փակեն այդ դպրոցները . . . Ս .
 մեն մարդ գիտէ թէ թուրքիոյ մէջ աւելի դիւ-
 րին է վարժարան մը բանալ քան թէ վարժա-
 րանի մը բացման արտօնութիւն ստանալն :

Կ'երեւի թէ հեղինակն դիտամբ անտեսել
 կ'ուզէ ա՛յն խափանարար ազդեցութիւնը որ ի
 գործ կը գրուի իրբեւ գրութիւն մէկ կողմանէ
 աչք շլացնելու համար վարժարան բանալու .
 մ'ես կողմանէ անոնց կրթական ծրարիւններն
 ոչնչութեան դատապարտելու մասին : Իրեն կը
 մնայ ապացուցանել թէ նիւթական շէնքերն բա-
 ւակտն են երկրի մը կրթական յառաջդիմու-
 թեան . ապա թէ ոչ ու՞ր են 25 ասորուան միջո-
 ցին հասած այն նոր լուսամիտ սերունդներն :

Երկրորդ . Վերոյիշեալ թուոյն մէջ են նա-
 եւ 1892 ի աշիթիներու վարժարանը՝ յատկապ-
 ուած կրթելու Գիւրտ ցեղոյ տներու զաւակնե-
 րն՝ որոնք իրենց ստացած կրթութեամբ եւ ներ-
 շնչութիւններով ի՞նչ բանի յատկացուած ըլլալ-
 նին ամեն հայ գիտէ, բացի բարեբաղդարար
 խիստ ցանցառ բացառութեամբ՝ որոց կը վեր-
 բերի նաեւ Սուլթանի ներքոգերագի Պ . Սմբատ
 Փափագեանը :

Կրթական յարկերու շարքին մէջ դրած է
 նաեւ հեղինակն վաճառականական վարժարանը՝
 որ դժբաղդարար իւր այդ սողերը գրած ժամա-

նակէն տարիներ առաջ արդէն գոցուած էին այդ չէնքին գոնեքը աւելորդ համարուելով այդպիսի յարկի մը գոյութիւնը :

Երբորդ Հեղինակը կարծես մասնաւոր դիտումով մը կ'ուզէ անդիտանալ հասարակաց կրթութիւնն անուամբ իր կրթասէր վեհապետին ժողովուրդէն հաւաքած տուրքը, ուրկէ կ'օգտուին մասնակցանքերը միայն . իսկ նոյն տուրքին վճարման միեւնոյն չափով մասնակցող ո՛չ մուհամմէտական հասարակութիւնները զըրկուած են անկէ ո՛ր եւ է բան մը ակնկալելու իրաւունքն ունենալէ :

Հեղինակին նոյն կրթասէր վեհապետն էր նաեւ որ 1894 էն առաջ յատուկ իրատէրով մը փակելու տուաւ գաւառաց մէջ ոչ-մասնակցական ցեղերու կողմէ բացուած շատ մը վարժարաններ , առարկելով թէ վարժարան բանալու մասնաւոր արտօնագիր չ'ունէին : Ասոնք պարզ եւ մեկին ապացոյցներ չ'էն միթէ սուլթանի ներքողուած կրթասիրութեանը :

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԵՆՆՔԵՐ . Երես 6 . Հատ . 2 . Այս հատուածի յառաջաբանը կը կազմէ սա տողերը . « Հասարակաց շինուածոց վերաբերեալ գործերը ա՛յնքան անթիւ եղան ո՛րքան նշանաւոր իրենց առաւելութեամբ , թէ փոխադրական միջոցները զիւրացնելու բնութեամբ , եւ թէ միջազգային վաճառականութեանը նպաստելու բնութեամբ : »

Այս « անթիւ » հասարակաց շինուածոց մէջէն ըստ հեղինակին յիշատակութեան , արժանաւորներն են միայն՝ վեց ձեւերով , որոց մէջ են Երուսաղէմ-Ենթաթի երկաթուղւոյ գիծն երկը ժամ անողութեամբ . Մուսանիս-Պրուսայի գիծը՝ որք հակառակ իրենց կարճ տեւողութեան ա՛յնքան արկածալից ճամբորդութիւն մը կը կազմեն . եւ Պոլսոյ կիսաւարտ քարտփանց շինութիւնը : Աւելորդ է այս մասին երկարել եւ քիչով կարելի է ընթերցողին գաղափար մը առ յայտնելով թէ ըստ հեղինակին այնքան անթիւ հասարակաց շինուածոց մէջ երկու ձեւերով կը գտնուին ծրագրական վիճակի մէջ , որոց մին է . . . մայրաքաղաքի փողոցներու պատշաճաւոր քարայտակումն . ա՛յն պոլսոյ փողոցներուն ուրոց խորդուրդութիւնը առած ի կարգ անցած է :

Հեղինակն կարող էր նաեւ աւելցնել այն ամեն մեծաշնորհի խնդրանքները՝ որ կը ներկայանային թուրք կառավարութեան , այլեւայլ պարագաներու մէջ . խմբակ մը կուզէր Եւրոպական ու Ասիական գիծը միացնել պոլսոյ կողմէն Իսկիւտար երկաթուղ կախեալ կամուրջի մը միջոցաւ . երկրորդ մը՝ կատարել նոյն գործը ընդ-ծովեայ խողովակներու գրութեամբ . ուրիշ ընկերութիւն մը կուզէր քաղաքը լուսաւորել եւ լեքտրական լուսով եւն եւն . որոնց ամենն ալ շնորհիւ իր ջատագոված կայսեր սեղմ մտածումներուն եւ հոշակեալ յետադէմ գրութեան , սաղմնային վիճակի մէջ մնացած են մինչեւ այսօր : Կրնար նաեւ , պարոն հեղինակն , թուում մասանցըն ընել ձեւերակներու շատ մը խնդրանքները թուրքիոյ այլեւայլ մասերու մէջ գտնուած հանքերը շահագործելու համար՝ որոց մեծ մասին խնդրանքը դժբաղդարար անհետեւանք մնացած են միեւնոյն պատճառաւ : Չէ՞ր գիտեր պարոն հեղինակն թէ՛ թուրքիոյ մէջ հանրօգուտ ձեռնարկներու յաջողութիւններն իսկ կախումն ունին անհամեմատ կերպով խոշոր կաշառքներու վճարումէն , որք անողղակի կերպով կը հասնին ի կայսերական պալատ : Հոն ուր անձնական շահեր կը նախընտրուին հանրային օգուտէն , հոն՝ կարելի չ'է երբէք հաւատալ թէ վայրկեան մը մտածուած ըլլան հասարակութեան բարելաւութեանը վրայ առանց անձնական շահու նկատմամբ : Երկաթուղիներու շինութեան , հանքերու շահագործման , նոյն իսկ ամենապարզ հասարակաց չէնքի մը կառուցման մեծաշնորհը կը տրուի ա՛յն ձեռնարկուին միայն , որ ամենէն աւելի կաշառք կուտայ պատկանեալ տեղն :

Իսկ ի՞նչ պիտի պատասխանէ մեզ թուրքիոյ աշխարհաշինութեամբ պարծենցող հեղինակին երբ հարցնենք թէ այդ ամեն շինուածոց մէջ որն է թուրքիոյ ձեռնարկող ոգին . այդ յիշուածոց մէջ որն է ա՛յն ձեռնարկող զոր թուրքն յընդացած եւ գործադրած է , եւ կամ թէ այդ ձեռնարկութեանց որն իրականացած կ'ըլլար եթէ

եւրոպացւոց ձեռնարկող ոգին եւ թուրքիոյ կաշառակերութիւնը ու քիչ մ'ալ դեպքանաց միջամտութիւնը գոյութիւն չ'ունենային : Այս ամենուն մէջ որն է թուրքիոյ փառքը՝ երբ այդ ամենը եւրոպացւոց գրամով , եւրոպացւոց հանձարով ու յամառ ջանքերով գործադրուած են . թուրքին արդեւ չ'ըլլա՞լը , երբ անդին այնքան անհամար ծրագիրներ իսկապէս չ'են գործադրուի որ սպարզ պատճառաւ որ թուրքին յետագիմական ոգին միշտ արգելք կը հանդիսանայ , եւ կամ թէ այն է թուրքիոյ փառքը երբ իրագործուած ձեռնարկներու մէջ մերթըմբերթ բարձրագոյն ազդեցութեամբ մուտ գտած թուրք պաշտօնեային կ'արտաքսուին իրենց անկանոն ու յուսի ընթացքին պատճառաւ :

(Եւրոպականութիւն) ՍՓԻՆԿՍ

ԻՐԱՆԱՏԻՈՒ Վ . ՍՍՐԱՑԵԱՆ

Դ ԵՐ Զ Ա Կ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պապ - Էլ - Հասիթ Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներ է Վերահանրածանօթ Անդղիացի վաճառական - գերծակ ԺՕՆ ՔՕԱԿՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու , այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար Փաշայի Տայրսին դիմացը , նորաչին խանութիւնըն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յաճախորդը ըստ ամենայնի գոհ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւութեանց զանազանութիւններ գտնելով , եւ մանաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր վճարումներու փոխան , ձեւաւոր եւ ճաշակաւոր զրեստներ ունենալով :

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ա Կ Ա Ն

ՋՈՒՐՆ ՈՒ ԶՐԱՌՈՒԹՈՒԹԻՒՆԸ

(Եւրոպականութիւն նախ որդ թիւէն)

Այս օրինակ յանձնարարութեան մը մէջ ներկայ ջրարուժութեան ընծիւղիւը կը նշմարուի : Այս թուականին երեք դար յետոյ Հոռով մի մէջ հոյակապ բաղնիքներ շինուեցան վսեմ նպատակին իրականութիւն տալու , Հոռովէական արի , անայլասեր ցեղը քաջող պահելու եւ հետեւաբար անվանող զինուորներու հասցնելու մտքը : Գաղափարը կատարելագոյն իրացաւ . տեսնող պաղ ջուրով դարմանելու նախնական փորձերն եւս այդ երկրին մէջ ի գործ դրուեցան ու յաջողութեամբ ստակուեցան : Ներոն կայսեր օրով Մարսիլիացի Եւրոպիս բժիշկը Հոռով մէջ սկսու պարսաւել եւ ձողկել նախնի դեղային վատթար դրութիւնը : Արդէն տարիներ առաջ Օգոստոս կայսրն ալ Անտոն Միւլգայի անդրին կանգնած էր պաղ ջուրով գինը ծանր եւ վըտանգաւոր հիւանդութիւն մը ազատած ըլլալուն համար : Կելսոս Հոռովացիք բժիշկը որ զերեստնէական առաջին դարուն կ'ապրէր , վերին բժշկական առողջապահիկ յատկութիւններուն վրայ բազմազան տեղեկութիւններ կը հաղորդէ : Գաղիանոս Յոյն ականաւոր բժիշկը եւ այլք ոչ նուազ կարեւոր տեսութիւններ ըրած են ջուրին գործածութեան մասին :

Վեցերորդ դարուն վերջերը , Մուհամմէտ , իսլամ կրօնին Հիմնադրը , Արաբիոյ կիզիչ կլիմային ներքեւ մարմինը առողջ եւ մերթին ճկունութիւնը անվթար պահելու նպատակով մասնաւոր լուսացումներ սահմանեց , որք մինչեւ ց'այսօր կը պահպանուին խստիւ թուրքերուն մէջ , եւ որ շատ կը նպաստեն անոնց առողջութեան : Արաբ բժիշկները դժբաղդարար նուազ կարեւորութիւն ընծայեցին Մուհամմէտի այս գրութեան , եւ Արաբացի կորոյս գամբան ըզ գամ նախկին համաւարու ճապկութիւնը՝ զոր առողջապահական կանոններուն կը

պարտէր : Ի դուր տեղը չ'են ըսեր բանաստեղծները՝ « ձուկերը ջուրին մէջ կը կայտեն : » Բոլոր կայսառ ու արթուն կենդանիները կը սիրեն ջուրը եւ յաճախ կը լուսացուին այդ կենդանարար հեղուկով , մարմնոյ բարեխառնութեան բնական ջրմատարիճանը անխախտ պահելու . բնազգամար : Տարիներով բաղնիքի երես չ'տեսնող մարդիկ կ'ընդարմանան ու գրեթէ կ'անդամալուծին , ինչու որ մեր հողերէն վաւարաններուն մաքրանոցները , երկամուսնները , ծանրաբեռուելով փառած ու մաշած գործարանաւոր նիւթերու կուտակմամբ՝ որք մասամբ մորթին ծակտիւններէն պիտի վտարուէին , յետս երեւակի շրջան մը ընելու կը պարտաւորեն արեւնը այդ աղոտոտ պարուստիւթեամբ , եւ ինքնաթուղակաւորում յառաջ կը բերին : Երկրորդ պարող , գետերու մօտ բնակող ու յաճախ լողանք առնող ժողովուրդները աւելի արի կորովի , ուշիմ ու արագաչարժ են :

Միջին դարը իր մութ երկնքով ու հեղձուցիչ միջոցներով չ'էր կրնար նպաստել ջրարուժութեան զարգացման , քանի որ իր թմրած բազուկներուն մէջ մեռելահանոյն կը մրափէին նոյն իսկ ծանօթ արուեստներն ու գիտութիւնները : 1633 ին Սեփթալա բժիշկը կ'սկսի եւ անդեմար պաշտպանել ջուրին բուժիչ բարեմասնութիւնները եւ գործածել զայն հիւանդատածութեան մէջ : Ապա Հէրման վան տէր Հէյտէն Ֆլանտրացի գործածեց այս կենսատու հեղուկը , բուժելու համար ամեն տեսակ հիւանդութիւններ , առանց բացառութեան : Հերմանէն վերջ՝ Ֆլոյէր անգլիացի գերմարդկային ճիգեր ըրաւ ջուրին յարգը հանրութեան զգացնելու նըպատակով , Դեռ ուրիշ բազմաթիւ ուսումնասիրող անձնաւորութիւններ , այդ դարուն մէջ , չ'իջեցան թէ հրատարակութիւններով եւ թէ գործնական փորձերով ապացուցանել ջուրին հիւանդատածական անբաղդատելի յատկութիւնները : 1761 ին Էտիկուրկիցի Գրիգոր ուսուցիչը պաղ ջուրով յաղողեցաւ բուժելու ժանտախտը , եւ Ռոպէրթ Ժապլան միեւնոյն եղանակով կասեցուց զեղին տեսիլն ընթացքը : Ընդու այս ժամանակ , Լիվըրուլցի Կուրին , շատ մը հետազոտութիւններէ զինի , դիտական վարդապետութեամբ հաստատեց բանաւոր ջրարուժութեան ամուր խարխիւը , եւ որ արդարեւ արժանի է հիմնադիր տիտղոսին : 1798 ին հրատարակած հոյակապ հեղինակութեանը մէջ հիւանդախօսական անհամար զիտողութիւններ ու խորհրդածութիւններ ընկել վերջ , ջրմատարիճան ի ձեռնին , կը ցուցնէ թէ ամեն տեսող ջրմուտիւն կուտակման արգասիք է , որոյ դէմ ազդուօրէն մաքրուելու համար անպատճառ կը կարօտինք ջրարուժական եղանակներուն , եւ մասնաւոր պաղ ջուրին , որոյ խոտորեցուցիչ յատկութիւնը անուրանալի է : Տասնութերորդ դարուն մէջ , պստմական այս առաջին շրջանին , Տր . Բօմի եւ Թիսօյի խանդավառ աշխատութիւնները յիշատակուելու արժանի են , թէ օր մը ջրարուժական գիւրք մը պատրաստել հարկ ըլլայ :

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ . — Հակառակ բոլոր այս ջանքերուն ու թափուած քրտինքներուն՝ ջրարուժութիւնը այսօր կրնար մոռցուիլ , թէ պարզ ու ժրջան գիւղացի մը , Փրիսից , Կրէօֆէնպէրկի մէջ (Աւարիական Սիլիզիա) ի գործ չ'գնէր այս եղանակը՝ զայն ժողովրդականացնելու ջրմ փափաքով վառուած : Փրիսից , գետ երիտասարդ , հանձարող նկատող մ'էր : Երկրը անցած զարձած տեսիլները կը պատկերաստին աչքին ու կը դրօշմուէին մաքրին մէջ : Ստորագաս սեպուած ժողովուրդին անուս գաւակը՝ յաւակնոտ ու բարձրաստիճան անձնաւորութիւններու մաքրը միջադեմու եւ լըռու ժողովուրդին ծոցը ծլած ամբասիր կարողութիւնները հըրապարակելու ելած էր : Ետտ անգամներ հիւանդ անասուններու վրայ ջուրին յառաջ բերած ըստփոխումները նշմարած էր : Պատահամբ , օր մը իր երկու կողերը կտորեցան , զորս գարմանելու համար ստիպուեցաւ գիմել երկրին վերադարձնելու : Ընդունայն եղան արուած խնամքները , եւ կեանքին մէջ խեղ մնալու անողող վճիռը յանձնապատասան դանկերէ դուրս թուա վերջնականապէս : Փրիսից կապարի պէս ճնշող այս սեւ գատակներն ներքեւ անձնակիք չ'եղաւ :

Ամուր կամքը, որոշ նկարագրերը ու յարատեւ ջանքը ամենակնճոտ պարագաներու ատեն կըրնան յաղթական հանդիսանալ: Թէեւ գեղջուկ ու մոլեռանդ, բայց չէր անգոյն բնաւորութեան տէր: Անհատականութեան եռանդուն ոգին չը կասեցաւ ետպաշտ դասակարգի մը կամածին վճռոյն առջեւ: Բնութեան զաւակը անհունութեան գրկին մէջ հունաւոր մտքերու գոռոզ, ցուցամուռ ու լիբը յայտարարութիւններէն պտգալով՝ առանձնացաւ իր խոհերուն խորը, եւ որոշեց պարզապէս իրեն ուսումնասիրութեան առարկայն կազմող ջուրով ինքզինքը դարձանել, որոյ արդիւնքը ոչ միայն իր բուժումը՝ այլ նաեւ մոռացման դատապարտուած ջրաբուժական հարցին հրապարակի վրայ կենդանանալուն եղաւ: Փրօնից շրջականերուն մէջ սկսաւ դարձանել ջախջախուած կամ խախտած անդամներ, ոտքի ու ձեռքի գելուցներ եւ ամեն կարգի պատահական արկածներ: Իր համբաւը փութանակի ամեն կողմ հռչակուեցաւ: Ողջամիտ ու վեհանձն Տր. Էօրէլ չ'էր կրնար իրականութեան հանդէպ գձձօրէն լուս մնալ. իր ներքոյներուն ու երկարատեւ հիւանդութիւններով տատառապող ականաւոր անձերու ապաքինութեան՝ եւ հետեւաբար ցոյց տրուած երախտագէտ մեծարանքն ու պաշտպանութեան շնորհիւ՝ Փրօնից կրցաւ աւստրիական կառավարութեան լուրջ ուշադրութիւնը իր գործին հրաւիրել, եւ ուր ուրեմն հիմնարկել տալ ջրաբուժական ամբակառոյց հաստատութիւն մը, ուր կը տրուէին լուրջ, շոգեով բաղնիք, բրդէ վերամկներով խանձարրապատում, թրջուած սաւաններով կալանդում, ջրցայտք, սպինգալուացում եւ պաղ ջուրի մէջ թրջուած լաթով շփում:

Փրօնից գրաւոր հեղինակութիւն մը չ'կըտակեց իր յաջորդներուն: Ըրած ուսումնասիրութիւններուն վրայ յստակ բան մը չ'ենք գիտեր, միայն կուսակիցները անոր գործնական եղանակներուն նկատմամբ հաստատագրեր թողած են, յորս տեղ տեղ բռնի ներմուծուած չափազանցեալ յերկրանքները աւելի կը սքողեն ու կը վտանգեն Փրօնիցի գործն ու յոջողութիւնները:

(Շարունակելի) Կ. Գ. ՈՒՉՈՒՆԵԱՆ Դահլիճ 17 Հոկտ. 1900

ՀԱՆՆԵԼՈՒԿ ԵՐԿՐՈՐԳ

Լեզու չ'ունի, բերան չ'ունի ձայն չ'ունի, բայց ճարտար է, ու ամեն բան կը խօսի թէ երեսը նայիս, լսես, դու իւր ձայն կը հասկնաս թէ, իւր մէջ կայ ամեն բան:

Մէկը որ կապեց պէտք է որ քակէ հարցուր ի՞նչ կապեց, ե՞րբ պիտի քակէ:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՎՍԵՄ ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ երեկ ազէքսանդրիա ժամանեց Մէսօպոթի շոգեանաւով:

ԳԱՀԻՐԷԻ Հայ թատերական խմբին դերասաններէն Տիար Երուանդ Պէնլեան որ չորս տարիներէ ի վեր քաղաքս կը գտնուի եւ որ վերջերս գործաւորի կեանքով կ'ըզբաղէր, այժմ տաժանելի հիւանդութեան մը ենթակայ ըլլալով անկողնոյ կը ծառայէ:

Կը լսենք թէ՛ այս առթիւ Գահիրէի Հայ գերասանները որոշած են ներկայ ամսոյ 25 ին կիրակի գիշեր եգիպտական թատրոնին մէջ տաճկերէն լեզուաւ արտաստվոր

ներկայացում մը սարքել ի նպաստ իրենց տառապեալ ընկերոջ:

Չի մոռնանք նաեւ այս տեղ յաւելուլ թէ՛ բարեսէր ազգայնոյ մը նախաձեռնութեամբ կազմուած կարգադիր մասնախումբ մ'ալ պիտի աշխատի ամեն կարելի միջոց ձեռք առնելով՝ նիւթական համեստ ոյժ մը գոյացնել եւ զայն փութացնել երկար տարիներէ ի վեր գեղարուեստի ծառայող սոյն հէգ աշխատաւորին:

Աւելորդ է հոս մասնաւորապէս շեշտել թէ՛ Գահիրէի հայ հասարակութիւնը չ'պիտի զլանայ երբէք իւր աշակցութիւնը նուիրել սոյն արտաստվոր ներկայացումն, եւ պիտի փութայ նոյն իսկ իւր բացառիկ օժանդակութեամբ, Տիար Երուանդ Պէնլեանը գէթ իւր անկողնոյն մէջ մխիթարել ու խրախուսել:

ՍՈՒԷՉԷ եկած լուրերուն նայելով Կէրճերանց գրահաւորը որուն մէջ կը գըտնուի Գրիւկէր նախագահը շաբաթ կամ կիրակի նաւահանգիստ պիտի հասնէր:

ՊՐԻՒՍԵԼԷՆ Թալալին կը հեռագրեն թէ Տր. Լէյտսի եւ Պօէր արտաստվոր պատգամաւորութեան երեք անգամները Բօր-Սայիտ պիտի երթան նախագահ Գրիւկէրը սպասելու եւ դիմաւորելու համար:

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ. — Միտան ընկող 70 տարեկան տեղացի կին մը խելագարութեան մը պահուն ինքզինքը իր տանը պատուհանէն վար նետեց:

Հակառակ իր 70 գարուններուն, դըժբաղդ կինը չ'է մեռեր, միայն գլուխը ճանկոտուեր է եւ կառավարութեան հիւանդանոցը փոխադրուած է այժմ:

ՆՇԱՆԱԹՈՍՈՒԹԻՒՆ. — Կիրակէ օրը կէս օրէ վերջ ժամը 4 ին կատարուեցաւ նշանախօսութեան արարողութիւնը Տիար Ապահ Պետրոսեանի ընդ Օրիորդ Մարի Եագուպեանի. բազմաթիւ հանդիսականներ ներկայ էին:

Նշանախօսութեան հանդէսին կը նախագահէր Արժ. Տէր Եղնիկ Բահանայ Պալունի:

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ՀՈԱՆՏԱՅԻ Թագուհուն, Վիլհէլմինի եւ իր մօրը մօտերս Բարիզ գալու մասին լուրեր կը շրջին:

Այս ճամբորդութիւնը առաջիկայ ամսուն տեղի պիտի ունենայ եւ թագուհիները անպաշտօն կերպով պիտի գան պարզապէս Վիլհէլմինայի արդուզարդի առարկաները եւ հարսանեկան հագուստները ապապրելու համար, որուն ամուսնութիւնը պիտի կատարուի նոր տարւոյ սկիզբը Ամսթերտամի մէջ:

Կ. ՊՈԼՍԷՆ Հոկտ. 23 թուականաւ կը հեռագրեն:

Ամսականներու վճարման անկանոնութեան պատճառաւ՝ Օսմանեան մէկ քանի գետապաններու գանգատանաց վրայ Սուլթանը իրատէ մը հրատարակեց, որով բացարձակապէս կը հրամայէ՝ Օսմանեան Պանգային հետ համաձայնիլ եւ ապագային կանոնաւոր վճարումները ապահովել:

ԲԱԴԷՐՍԸՆԻ ԱՆԻՇԻԱՆԱԿԱՆՆԵՐԸ. — Ամերիկեան կառավարութիւնը՝ Իտալա-

կան կառավարութեան խնդրանաց վրայ քննութիւն մը բացած էր Բաթէրնի անխիշտանկան դաւակցութեան վրայ. թէպէտեւ քննութիւնը արդիւնք մը ունեցած չ'է, սակայն Նիւ-Եօրքի խտալական լիշտանութիւնները ձիագգամօ Պիւսթիթի անուն մէկէ մը յայտարարութիւններ ընդունած են, որ յայտարարեց թէ՛ Բաթէրնի Լուիճի Կրիմաթօ հանրածանօթ անխիշտանկանը՝ Մոնզայի մէջ Ումպէրթօ թագաւորին սպաննութեան ատեն երկրորդ ատրճանակ մը կը բռնէր, գործածելու համար այն պարագային մէջ յորում Պրէսսի պիտի խրէր իւր ոճրին մէջ:

Այժմ՝ Կրիմաթօ հարաւային Ամերիկա ապաստանած է:

250 Պօէր գերիներ Ս. Հեղինէ զրկուած են:

ԹՕԲԻՕԷՆ հեռագիր մը կ'իմացնէ տարօրինակ փորձ մը եղած է կայսրուհին գէմ՝ ճաբոնի վեհապետուհին երբ պալատին շրջափակին մէջ կառքով պտոյտ կ'ընէր անծանօթ մը դէպի կառք նետուեցաւ եւ կայսերական կառքին մէջ սանդալ մը նետեց (փայտմոյլ): Առաջին պահուն կարծուեցաւ որ ուռմը մ'էր, յարձակողը ձերբակալուած եւ բանտարկուած է, կը կարծուի թէ խենդ մը եղած ըլլայ:

ՄԱՆԻԼԱՆԷՆ կ'իմացուի թէ ամերիկացի կամաւորաց հազարապետ Չարլըզ Ռօքֆէլէր որուն անյայտացումը ծանուցուած էր, գասալքած է հետեւեալ ողբերգական պարագայից տակ:

1872 ին Հօնկ-Քօնկ գտնուած պահուն Չինացի դայեկ մը այս սպային երեք տարեկան տղան առեւանգած էր, եւ հազարապետը հակառակ իր կատարած այնչափ փրնտուտըններուն չ'կարողացաւ ոչ տղան եւ ոչ ալ առեւանգիչին հետքը գտնել: Վերջերս Լուսօն կղզոյն մէջ կատարուած զինուորական գործողութեանց պահուն, հազարապետը իր ձեռքովը թշնամի երիտասարդ ճերմակ սպայ մը սպաննեց որ խուճը մը փիլիպեան ապստամբաց կը հրամայէր: Երիտասարդ սպային դիակին վրայէն թղթեր գտաւ Հօնկ-Քօնկցի Բօլ Սթանհօբ անուամբ եւ սպային անգղիերէն գրուած յուշատետրը: Տարօրինակ զուգադիպութեամբ մը Ռօքֆէլէրը հազարապետը Հօնկ-Քօնկի ամերիկայի հիւպատոսէն իմացաւ որ Բօլ Սթանհօբը այդ քաղաքին անգղիացի վաճառականներէն միոյն որդեգիրն էր: Նախապէս Բօլ Եէն կը կոչուէր եւ այս անուամբ ձիզվիթներու գօլէժ մը գրուած էր Չինացի կնոջ մը կողմէ: Արդ, հազարապետին զաւակը առեւանգողը Եէն կը կոչուէր խեղճ մարդը ալ իր բուն զաւակը իր ձեռքովը սպաննելուն տարակոյս չ'ունենալով՝ յուսահատութեան խելագարած եւ լքած է իր գունդը:

ԱՅՍ ՊԱՀՈՒՎ Ամերիկայի Պօսթըն քաղաքին մէջ էտիմպուրկցի Ռիչարտ ձօրտանի եւ Պօսթընցի Չարլըզ Յրանսիս Պարքըրի միջեւ աղիւսախաղի (տամախ) մեծ մրցում մը կայ. յաղթողը ամենամեծ ախոյեանը պիտի ըլլայ, խաղադրուր 2000 տուար, այսինքն 10000 ֆրանք է: Այս պահուն 30 սակէն (բարթի) 13 ը խաղացուած է երկուքըն ալ մէյմէկ անգամ շտհած են իսկ 11 սակը եւ ոչ մին չահած է. հետեւաբար բացարձակապէս անկարելի է դեռ ըսելը թէ՛ վերջնականապէս ո՞վ պիտի չահի. օրը միայն մէկ սակ մը կը խաղան, 27 օրէն պիտի հասկցուի վերջին չահողին անունը:

ԿԵՆՂԱՆԻՆԵՐՈՒ ԱՐՅՈՒՆՔԸ . — Գիտենք որ բոլոր որոճացող կենդանիները կուլան նշանակելի դիւրութեամբ « Հորթի մը պէս լալ » արտայայտութիւնը առածի կարգանցած է : Բայց միայն հորթը չ'է որ կ'արտատուէ բոլոր որոճողները գիտեն թէ եղջերուն յետին տագնապին մէջ հեղեղի պէս արցունք կը թափէ : Այժմամբ , այժր , ընձուղտը , հիւսիսեղնը հաւասարապէս զգայուն են . հաստատուած է շատ անդամներ որ շուններն ալ կուլան :

Ծովային սանտու կենդանիներն ալ կ'արտատուեն , բոլոր գրողներն ալ կը համաձայնին ըսելու որ դէլիները իրենց մահուան ժամանակ խոր հառաչանքներ կ'արձակեն և արցունք կը թափեն : Պատիճաւոր փոկ մ'ալ տեսնուած է որ կ'արտատուէ եղեր , որովհետեւ նաւազ մը զայն կը շարշարէր : Ժօֆրուա Սէնդ Իլէր և Ֆ . Գիւլիէ կը հաստատեն թէ եթէ փոքրիկ տիւկօնք մը բռնուի , վստահ պէտք է ըլլալ որ մայրն ալ ինքնիրենը կուգայ , որովհետեւ փոքրիկները սուր ճիչ մը կ'արձակեն և կ'արտատուեն :

Փիղն ալ նշանաւոր է արցունք թափելու տեսակէտով . միայն կոկորդիլան է որ երբէք չի լար . . . :

ԱՍԻՏ ՊՈՐԻՔ . — Կ'երեւայ թէ աւիս պօրիկ կոչուած նիւթը , զոր ջուրի մէջ հալեցնելով կը գործածեն իբր աչքի գեղ , բաւական զորաւոր թոյն մ'է եղեր . անցած օրեր Բարիզի մէջ երկու մանուկներ , որոնք մի քանի կաթիլ կ'ըլեր էին այդ հեղուկէն , թունաւորուած և մեռած են : Ուստի տանտիկիները պէտք է զգոյշ ըլլան :

ՉԱՅՆԱԳՐՈՎ ԿՏԱԿ . — Բաւական ժամանակ կայ որ Սմոլէնսքի կառավարչութեան մէջ հարուստ կալուածատէր մը մեռած էր : Կտակ ձգած չ'էր :

Արդ , քանի մը օր կայ երբ դիպուածաւ ատեանի վճիռները գործադրող պաշտօնեաներէ կնքուած տուփ մը բացին տեսան որ ձայնագիր մը կը պարունակէր մէկ գլանով : Ո՛րչափ մեծ եղաւ ներկաներուն զարմանքը , երբ տեսան որ գործիքին վրայ գրուած գլանը իմացոց նշնջեցեալին վերջին կամքը : Այժմ՝ Ռուս դատարանները կ'զբաղին այն խնդրով թէ այս կերպով ձգուած կտակ մը օրինապէս ընդունելի՞ է թէ չ'է :

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԻՐԱԿԻ 4 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 7344, 1401, 6877, 3383, 6320, 6967; 895, 72, 7703, 6520, 1505, 4557; 3874, 7259, 6512, 8241, 6270, 5484; 955, 1538, 8471, 157, 4464, 2130; 5553, 2598, 6479, 6873, 4523, 5963

Ա . Պ Ա Լ Ե Ա Ն

Մ Ա Թ Ի Լ Տ

(Գաղթականաց կեանքէն)

ԳԻՆ 50 ՍԱՆԺԻՄ

ԴԻՄԵԼ ԹԵՐԺԻՄ ԻՄԲԱԿՐԱՏՈՒՆԸ

Տարագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

« ԱՐՇԱԼՈՅՍԻ »

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԻՁԲԸ

Օտեսնիչի դեղատեսիկի դիւրացի փողոցին մեջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ , մաքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ , կ'ընդունուին .

Այցեխարտեր , Ծոցաքերակներ , Գիւրթեր , Հրաւիրագրեր , Մահազղներ , Տեղեկագիրներ , Կանոնագիրներ , Տոններ և այլ և այլ վաճառականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահաշուութիւն և լափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ :

ԺԱՄԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԷ՞Ք ՈՒՍԱՆԻԼ

Երիտասարդ մը որ երկար տարիներ ժամագործութեան արհեստին հետեւելով կատարեալ հմտութիւն ստացած է ամեն տեսակ ժամացոյցներ նորոգելու արհեստին մէջ , կ'ուզէ ունենալ ընկեր մը՝ որ վաճառատուն մը բանալու գրամագրութիւն և միանգամայն քիչ ատենի մէջ արհեստը ուսանելու փափաքը ունենայ :

Արհեստաւոր երիտասարդը կը գտնուի ԳԱՅԷ ԵՓՐԱՏ ուր կրնան իրեն հետ բանակցել , անոնք որ հետամուտ են :

Ե Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Գ

Նոր Կեսնի ի եւ Անահիտ ի Անթերի մի հաւաքածոյն ունենալ փափաքողք առիթը ձեռքէ չ'փակցնելով փութով Խմբագրատունս դիմեն , դիւրագին զայնս գնելու :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 4 ՆՈՅԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 1062, 9480, 9636, 7589, 215, 844; 8711, 3240, 4436, 1988, 5695, 8723; 4610, 8969, 495, 5387, 346, 2207; 9674, 7949, 5075, 1463, 2336, 5499; 2668, 1274, 3040

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՐՈՒԿ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԵՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ինչպաս իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ այնպէս ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Գանի ոս ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատան մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐՇ ի նիքէլ , կոթէն լարուղ սիլուսի ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նայնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 ՂՐՇ է սկսեալ մինչև 2500 ՂՐՇ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և սքսիտէ ժամացոյցներ : պատի և բօնսօլի բազմազան Բանտիւլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Թօնօկրաֆներու :

ԱԻԱԶԱԻՏԻ ԴԱՐՄԱՆ

Նախորդ դարերու մագաղաթեայ բըժրկարաններէն քաղուած և խիստ շատ փորձերէ վերջ , օգտակար արդիւնք ձեռք բերելէ յետոյ , կը փութամ յայտարարել աւազախտի հիւանդութեամբ տառապողներուն և մասնաւորապէս զեղջարծներուն և բժշկաց՝ որպէսզի ուշագրութիւն դարձնեն սոյն օգտակար դարմանին վրայ :

Աւազախտի միակ դարմանն ունենալու համար պէտք է դիմել ստորագրելոյս հասցէին Ի ԿԱՅԷ ԵՓՐԱՏ , ՄՈՒՋԻՔԻ ԶՕՐԱՆՈՅԻՆ ԴԻՄԱՑ — ՄԷՅՍԱՆ ԱՊՏԻՆ :

Գիները

- 10 Ֆրնդ մէկ բաժին աւազ ունեցողի
20 » երկու » քար ունեցողի .
30 » երեք » արմատացած հիւանդութեանց :

Այն դարմանը գործածուած օրէն իսկ պիտի տեսնուի առողջութեան նշաններն և քիչ ժամանակէն կատարելապէս առողջացած պիտի ըլլան այս հիւանդութեամբ տառապողները :

ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ

ՀԱԻԱԲԱԾՈՑ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ

ՏՆՕՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտներու աշակցութեամբ եռաձայն և քառաձայն պատրաստուած սոյն հաւաքածոյնէն գնել փափաքողներն կամ բաժանորդացուել ուղղորդներն , կրնան դիմել՝ Արշալոյս ի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօրէնին :

ՏՃԻ ՄԻԶՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՐՈՒԿ 1 ՄԻԵԱՐ 437 ՄԻԵՈՆ

Այնպէսզի մէջ գտնուող ուրիշ որ և է ինչպէսզի տեսնուի աւելի երաշխաւորութիւններ , ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործաւատար յԱղեքսանդրիա :